ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ոստան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Ոստան, 2-33-07, 2-52-90, vostangyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 41

ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածով ավագանին

ՈՐՈՇԵՑ

Հաստատել ավագանու նիստի հետևյալ

ՕՐԱԿԱՐԳԸ՝

1. Ոստան համայնքի տարածքում 2018 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին:

/Զեկ.՝ Հ.Խաչատրյան/

2. Ոստանի համայնքապետարանի հաշվեկշռում եղած շրջանառու և հիմնական միջոցների հաշվառման արդյունքների հաստատման մասին:

/Զեկ.՝ Հ.Խաչատրյան/

3. Ոստան համայնքի 2017 թվականի բյուջեում փոփոխություն կատարելու մասին:

/Զեկ.՝ Հ.Խաչատրյան/

4. Ոստան համայնքի ղեկավարի աշխատավարձի, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի հաստատման մասին:

/Զեկ.՝ Հ.Խաչատրյան/

5. ,,Արարատի մարզի Ոստանի մանկապարտեզ,, համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի հաստատման մասին:

/Զեկ.՝ Հ.Խաչատրյան/

6. ,,Արարատի մարզի Ոստանի մանկապատրեզ,, համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2018 թվականի ծնողական գումարի չափը սահմանելու մասին:

/Զեկ.՝ Հ.Խաչատրյան/

7. ,,Արարատի մարզի Ոստանի մանկապարտեզ,, համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատանքները ձմռան սեզոնի ընթացքում դադարեցնելու և

մանկապարտեզի աշխատակիցների վարձատրության մասին:

/Զեկ.՝ Հ.Խաչատրյան/

8. ,,Արարատի մարզի Ոստանի մանկապարտեզ,, համայնքային ոչ առևտրային կազմակերպության ծնողական գումարի մասին:

/Զեկ.՝ Հ.Խաչատրյան/

9. Ոստան համայնքի 2018 թվականի բյուջեի հաստատման մասին:

/Զեկ.՝ Հ.Խաչատրյան/

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ
2. ԱԼՈՅԱՆ ՇՈՂԻԿ
3. ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆԱՐԻՆԵ
4. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԾՈՎԻԿ
5. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ
6. ՄԱՐԳԱՐՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱԿՈԲ ԽԱՉԱՏՐՅԱՆ

20 __ թ. _____
գ._____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ոստան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Ոստան, 2-33-07, 2-52-90, vostangyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 42

ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական տուրքերի և վճարների մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 10 և 11-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության ,,Աղբահանության և սանիտարական մաքրման մասին,, օրենքի 14-րդ և 15-րդ հոդվածներով, ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետի դրույթներով ավագանին

ՈՐՈՇԵՑ

Հաստատել Ոստան համայնքի 2018 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը համաձայն հավելվածի:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ
2. ԱԼՈՅԱՆ ՇՈՂԻԿ
3. ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆԱՐԻՆԵ
4. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԾՈՎԻԿ
5. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ
6. ՄԱՐԳԱՐՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱԿՈԲ ԽԱՉԱՏՐՅԱՆ

20 __ թ. _____
գ._____

Հավելված 1
Ոստան համայնքի ավագանու
22-ը դեկտեմբերի 2017թ.
թիվ 42-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2018Թ-Ի ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների /ներառյալ՝ ոչ հիմնական/ շինարարության /տեղադրման/ թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար՝

1/ մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար 7500 դրամ.

2/ սույն կետի <<1>>-ին ենթակետում չնախատեսված օբյեկտների համար՝

ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 10000 դրամ.

բ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15000 դրամ.

գ. 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 17500 դրամ.

դ. 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 50000 դրամ.

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

3/ մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 750 դրամ.

4/ 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1250 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի/ համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1/ չի նախատեսվում կառույցների, վերակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքի գործառնական նշանակության փոփոխություն՝ 750 դրամ.

2/ բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ

շենքի գործառնական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի 1 ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքի գործառնական նշանակության փոփոխության մասով.

3/ նախատեսվում է միայն կցակառույցների, վերակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ շինարարություն կամ շենքի գործառնական նշանակության փոփոխության , ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝ 1250 դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3.500 դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 4.500 դրամ,

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5.000 դրամ,

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10.000 դրամ,

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 15.000 դրամ,

զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 30.000 դրամ:

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչ 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2.500 դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3.500 դրամ,

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5.000 դրամ,

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10.000 դրամ,
ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 15.000 դրամ,
զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 30.000 դրամ:
5. Համայնքի տարածքում՝
1/ բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ մեկ քառակուսի մետրի համար.
2/ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և/կամ / սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 150.000 դրամ.
3/ խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 30.000 դրամ.
4/ համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքն ընթացիկ տարվա համար սահմանվում է 50.000 դրամ.
5/ համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝
հիմնական շինությունների ներսում՝
ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2.000 դրամ,
բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 3.000 դրամ,
գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5.000 դրամ,
դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 8.000 դրամ,
ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 10.000 դրամ,
զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15.000 դրամ:
Ոչ հիմնական շինությունների ներսում՝
ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 500 դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1.000 դրամ,
գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1.000 դրամ,
դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4.000 դրամ,
ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 8000 դրամ,
զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 12000 դրամ:
6. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները /սաունաները/, խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքն ընթացիկ տարվա համար սահմանվում է՝
1/ առևտրի օբյեկտների համար՝ 25.000 դրամ.
2/ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50.000 դրամ.
3/ բաղնիքների /սաունաների/ համար՝ 200.000 դրամ.
4/ խաղատների կազմակերպման համար՝ 500.000 դրամ.
5/ շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250.000 դրամ.
6/ վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100.000 դրամ:
7. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար 1 քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝
1/ ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1.500 դրամ.
2/ թունդ ալկոհոլային /սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2.500 դրամ;
3/ այլ արտաքին գովազդի համար՝ 1.000 դրամ.
4/ սոցիալական գովազդի համար՝ 0 դրամ,
5/ համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդի դատարկ գովազդային վահանակների մեկ քառակուսի մետրի դիմաց սահմանվում է տեղական տուրք՝ տվյալ համայնքում օրենքով նախատեսված կարգով այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով՝ 250 դրամ,
6/ եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը, ապա համապատասխան բյուջե պետք է վճարի յուրաքանչյուր քառակուսի մետրի համար օրենքով նախատեսված կարգով տվյալ համայնքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ը՝ այդ գովազդի մակերեսին համապատասխան՝ 100 դրամ:
8. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքն ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 1.000դրամ:
9. Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 50.000 դրամ:

10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու /բացառությամբ՝ երթուղային տաքսիների/ ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքն ընթացիկ տարվա համար սամանվում է 5.000 դրամ:
11. Սույն որոշման 1-ին, 2-րդ, 3-րդ կետերի դրույքաչափերը կիրառվել են 0.5 գործակցով:

Տեղական վճարներ

1. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտական ակտի ձևակերպման համար, ինչպես նաև շահագործման թույլտվություն տրամադրելու համար, տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարներ սահմանվում է՝ 1.000 դրամ.
2. Տեղական ինքնակառավարման մարմնի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 500 դրամ:
3. Տեղական ինքնակառավարման մարմնի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար՝ 500 դրամ:
4. Տեղական ինքնակառավարման մարմնի կողմից աղբահանությունը կազմակերպելու համար աղբահանության վճար սահմանել յուրաքանչյուր ամսվա համար՝
1/ կենցաղային աղբի համար՝ համայնքում փաստացի բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական 100 դրամ,
2/ ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝ ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 1500 դրամ, կամ ըստ զանգվածի մեկ տոննա աղբի համար՝ 5000 դրամ,
3/ իրավաբանական անձանց աղբահանության վճարի չափ սահմանել հետևյալ սակագներով՝
ա. առևտրի /այդ թվում՝ շուկաների/, հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ մատուցողների համար՝ 20 դրամ՝ 1 քառ. մետրի համար,
բ. արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների համար՝ 4 դրամ,
գ. կրթական, մշակութային, առողջապահական , սպորտային, գիտահետազոտական շինությունների համար՝ 2 դրամ՝ 1 քառ. մետրի համար:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ.ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ոստան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Ոստան, 2-33-07, 2-52-90, vostangyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 43

ՈՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ԵՂԱԾ ՇՐՋԱՆԱՌՈՒ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 29-րդ կետի դրույթներով ավագանին

ՈՐՈՇԵՑ

Հաստատել Ոստանի համայնքապետարանի հաշվեկշռում եղած շրջանառու և հիմնական միջոցների հաշվառման արդյունքները:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ
2. ԱԼՈՅԱՆ ՇՈՂԻԿ
3. ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆԱՐԻՆԵ
4. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԾՈՎԻԿ
5. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ
6. ՄԱՐԳԱՐՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱԿՈԲ ԽԱՉԱՏՐՅԱՆ

20 __ թ. _____
գ._____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ոստան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Ոստան, 2-33-07, 2-52-90, vostangyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 44

ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԻ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 11-րդ և 28-րդ կետերով ավագանին

ՈՐՈՇԵՑ

Հաստատել Ոստան համայնքի ղեկավարի աշխատավարձը, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների հետևյալ թվաքանակը՝ 13, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելվածի:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ
2. ԱԼՈՅԱՆ ՇՈՂԻԿ
3. ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆԱՐԻՆԵ
4. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԾՈՎԻԿ
5. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ
6. ՄԱՐԳԱՐՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱԿՈԲ ԽԱՉԱՏՐՅԱՆ

20 __ թ. _____
գ._____

Հավելված 2
Արարատի մարզի Ուստան համայնքի
Ավագանու 22.12.2017թ. թիվ 44-Ն որոշման

ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

1. Համայնքի ղեկավար՝ 1 դրույք 276000 դրամ
   Հայեցողական պաշտոն՝
2. Համայնքի ղեկավարի տեղեկալ՝ 1 դրույք 193000 դրամ
   Համայնքային ծառայողներ՝
3. Աշխատակազմի քարտուղար՝ 1 դրույք 221000 դրամ
4. Գլխավոր մասնագետ՝ 1 դրույք 193000 դրամ,
5. Առաջատար մասնագետ՝ 1 դրույք186000 դրամ,
6. Առաջին կարգի մասնագետ՝ 1 դրույք138000 դրամ,
7. Երկրորդ կարգի մասնագետ՝ 1 դրույք135000 դրամ,
   Քաղաքացիական աշխատանք՝
8. Հարկահավաք՝ 1 դրույք 138000 դրամ,
   Տեխնիկական սպասարկման անձնակազմ՝
9. Վարորդ՝ 1 դրույք 104000 դրամ,
10. Հավաքարար՝ 1 դրույք 83000 դրամ,
11. Պահակ՝ 1 դրույք 83000 դրամ,
12. Պահակ՝ 1 դրույք 83000 դրամ,
13. Գերեզմանատան պահակ՝ 1 դրույք 138000 դրամ:

ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Ոստան համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Ոստան, 2-33-07, 2-52-90, vostangyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 45

<<ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՈՍՏԱՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 28-րդ կետով ավագանին

ՈՐՈՇԵՑ

Հաստատել ,,Արարատի մարզի Ոստանի մանկապարտեզ,, համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների հետևյալ թվաքանակը՝ 11, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը.

1. Տնօրեն՝	145000 դրամ,
2. Դաստիարակ՝	134000 դրամ,
3. Դաստիարակ՝	134000 դրամ,
4. Երաժիշտ՝	78000 դրամ,
5. Հաշվապահ՝	73000 դրամ,
6. Խոհարար՝	73000 դրամ,
7. Խոհարարի օգնական՝	78000 դրամ,
8. Դայակ՝	73000 դրամ,
9. Դայակ՝	78000 դրամ,
10. Պահակ՝	73000 դրամ,
11. Պահակ՝	78000 դրամ:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԿԱՐՈՒԺԱՆ
2. ԱԼՈՅԱՆ ՇՈՂԻԿ
3. ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆԱՐԻՆԵ

4. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԾՈՎԻԿ

5. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ

6. ՄԱՐԳԱՐՅԱՆ ՌՈՒՍՏԱՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱԿՈԲ ԽԱՉԱՏՐՅԱՆ

20 __ թ. _____

գ._____

Հավելված 3
Արարատի մարզի Ուստան համայնքի
ավագանու 22.12.2017թ. թիվ 45-Ն որոշման

<<ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՈՍՏԱՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

1. Տնօրեն՝	145000 դրամ,
2. Դաստիարակ՝	134000 դրամ,
3. Դաստիարակ՝	134000 դրամ,
4. Երաժիշտ՝	78000 դրամ,
5. Հաշվապահ՝	73000 դրամ,
6. Խոհարար՝	73000 դրամ,
7. Խոհարարի օգնական՝	78000 դրամ,
8. Դայակ՝	73000 դրամ,
9. Դայակ՝	78000 դրամ,
10. Պահակ՝	73000 դրամ,
11. Պահակ՝	78000 դրամ:

ՈՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԽԱՉԱՏՐՅԱՆ